



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ



Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«06» 08 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 64

Ձեռնարկողը՝

Հայաստանի Տարածքային Ջարգացման Հիմնադրամ
Ք. Երևան, Կ. Ուլենցու 31

Գործունեությունը՝

<<Դեպի Տաթև վանական համալիր տանող ճանապարհի վերակառուցում>> աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Սյունիքի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ՝



Ռ. Ոսկանյան

Նախագծված ճանապարհը ներառում է 8-11 մ հորիզոնական շառավղով օձապարեր և 20-300 մ շառավղով կորեր: Վերակառուցվող ճանապարհի սկզբնամասը (53 գմ) և վերջնամասը (260 գմ) ունեն ա/բ-ե ծածկ, իսկ մնացած հատվածի ծածկը գրունտային է, հիմնականում հարթ մակերեսով, լայնությունը 6-9 մ է: Ճամփեզրով առկա է փորված ջրահեռացման առու: Ճանապարհի որոշ հատվածներում արգելապատերի բացակայության պատճառով առկա են քարաթափումներ:

Համաձայն նախագծի կորերի համար պահանջվող լայնությունն ընդունվել է հաշվի առնելով ճանապարհի տվյալ հատվածում առկա հողային պաստառի լայնությունը և ճանապարհի օտարման գոտին: Ճանապարհի երթևեկելի ասֆալտե հատվածի լայնությունը նախագծվել է 5.4 մ, որին ավելանում է 0.3 մ լայնությամբ ամրացման շերտեր: Նախագիծը ներառում է միայն գոյություն ունեցող մայթի վերակառուցում՝ 64 գմ երկարությամբ՝ 30x15 սմ չափի բազալտե եզրաքարերով և 3 սմ ասֆալտ-բետոնե և 12 սմ խիճային հաստությամբ ծածկով:

Ճանապարհի օտարման գոտու տարածքում՝ 2 տեղ, նախագծվել է ավտոմեքենաների կայանման և ուղևորների հանգստյան համար վայրեր (360 ք.մ և 295 ք.մ մակերեսներով դիտահարթակներ՝ շվաքարաններով և նստատեղերով): Դիտահարթակները նախատեսված են ասֆալտապատ, բնական կոպտաշ սալերով սալապատված և բազալտե քարերով և մետաղական ճաղավանդակներով եզրափակված: Դիտահարթակների տեղի ընտրությունը որոշվել է բացվող տեսարանի ընտրությունից ելնելով:

Ճանապարհի որոշ հատվածներում, որտեղ առկա են քարաթափումներ, նախագծվել է 5 հակաթափվածքային պատեր՝ 2 մ բարձրությամբ և 255 գմ երկարությամբ: Զրահեռացման համար նախագծվել է դրենաժային համակարգ՝ 10 սմ-ից ոչ պակաս քարերի լիցքով: Ճանապարհի ամբողջ երկարությամբ նախատեսված է գոյություն ունեցող առուների ամրացման աշխատանքներ՝ ընդհանուր 5928 գմ երկարությամբ: Ճանապարհի ասֆալտապատ հատվածում նախատեսվում է իրականացնել շերտի հեռացում՝ քերման եղանակով և մանրահատիկ ասֆալտ բետոնե շերտի տեղադրում, իսկ մնացած՝ 5.787 կմ-ի համար նախագծվել է ա/բ-ե ծածկ:

Ենթաձրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել նաև ճանապարհի եզրին առկա աղբյուրի և աղբյուրին կից հարթակի բարեկարգման աշխատանքներ՝ կոպտատաշ բնական քարերով:

Աշխատանքների շրջանակում նախատեսվում է նաև Տաթև վանական համալիրի պահպանական գոտու սահմաններում՝ մոտ 340 մ երկարությամբ ճանապարհահատվածի բարեկարգում և Վանքի մետաղական ցանկապատից դուրս, ձախակողմյան մասում՝ տարածքի բարեկարգման աշխատանքներ, որը հետագայում հնարավոր կլինի օգտագործել մանրածախ առևտրի համար: Համալիրի պահպանական գոտու տարածքում, ինչպես նաև ներկայացված գործունեության շրջանակում չի նախատեսվում նոր շինությունների կառուցում կամ տաղավարների տեղադրում:

Ճանապարհի վերականգնման աշխատանքների ընթացքում Տաթև և Տանձատափ համայնքներին մոտեցման համար, աշխատանքներին զուգահեռ հատկացվելու են երթևեկելի գոտիներ, ինչը հնարավոր կլինի օգտագործել շինարարական աշխատանքների ընթացքում:

Տեղանքի բնական թեքություններով պայմանավորված, երթևեկության անվտանգության ապահովման նպատակով ճանապարհի եզրով նախատեսվում է մետաղական արգելափակոցների տեղադրում, այդ թվում՝ 84 հատ նախագողջացող, 4 հատ առավելության, 1 հատ հատուկ նշանակության, 7 հատ տեղական ցուցիչներ, 8 հատ սպասարկման նշաններ և 17 հատ ժամանակավոր ճանապարհային նշաններ:



Ենթածրագրի իրականացման փուլերի համար մշակվել է բնապահպանական և սոցիալական աղբեցությունների բացառմանը, մեղմացմանը և նվազեցմանն ուղղված միջոցառումների ծրագիր, որոնցից կարևորվում են հետևյալները.

- ❖ շինարական աղբի կանանոնավոր հեռացում և պահում Տաթևի համայնքապետարանի կողմից թույլատրված աղբավայրում,
- ❖ շինարարական հրապարակի ջրցանում և արտանետումների մակարդակների կառավարում,
- ❖ շինարարական նյութերի ձեռք բերում լիցենզավորված մատակարարից, իսկ ընդերքօգտագործման դեպքում՝ համապատասխան հանքարդյունահանման թույլտվություն,
- ❖ աշխատանքների իրականացման ընթացքում աղմուկի թույլատրելի մակարդակների պահպանում,
- ❖ վառելիքի և նավթանման նյութերի պահում բետոնե հիմքերի կամ մետաղական տակդիրների վրա,
- ❖ արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ,
- ❖ ասֆալտե քերված զանգվածի հեռացում, վերամշակում և հետագա օգտագործում,
- ❖ կլիմայի փոփոխությամբ պայմանավորված երևույթներ՝ սելավներ, բացառող և/կամ մեղմացնող միջոցառումներ:


Հաշվետվությունում ճանապարհի շահագործվող ժամանակահատվածի համար գնահատվել է CO₂ գազի արտանետումների քանակները: Համաձայն կանխատեսվող հաշվարկների ճանապարհահատվածի վերակառուցումից հետո, CO₂ գազի քանակը ներկայիս արտանետումների համեմատությամբ կավելանա 14%-ով (50.6տ), ինչը կունենա զգալի փոքր ներդրում ջերմոցային գազերի արտանետման հաշվեկշռում:

Փոշու և այլ վնասակար նյութերի կոնցենտրացիաների ժամանակավոր արտանետումների համար հաշվարկվել է շինարարության փուլում վնասակար նյութերի հետևանքով օդային ավազանին հասցվող տնտեսական վնասը, որը կազմում է 32779 ՀՀ դրամ:

Ենթածրագրի գործողությունների շրջանակներում շինարարության և շահագործման փուլերի համար կազմվել է բնապահպանական և սոցիալական մոնիթորինգի պլան, որում ներառված բնապահպանական և սոցիալական մեղմացման միջոցառումների վերահսկողությունն իրականացվելու ՀՏՀ կողմից:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացներում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային իրազեկումներ և քննարկումներ (Սյունիքի մարզի Տաթև և Շինուհայր համայնքներում), հանրության կողմից հնչած դիտողություններն ու առաջարկություններն ընդունվել և հաշվի են առնվել գնահատման և փորձաքննության գործընթացներում: Փորձաքննության գործընթացում ենթածրագրի վերաբերյալ ստացվել են կարծիքներ՝ մշակույթի և արտակարգ իրավիճակների նախարարություններից:

Ամփոփելով վերը շարադրվածը, պետք է նշել, որ գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են ժամանակավոր և տեղայնացված բնույթի՝ պայմանավորված շինարարության տևողությամբ: Մինչդեռ վերակառուցված ճանապարհի շահագործման ընթացքում ենթածրագրից ակնկալվում են՝ երկարաժամկետ դրական բնապահպանական և սոցիալական ազդեցություններ: Ճանապարհի վերակառուցումը կունենա դրական սոցիալ-տնտեսական ազդեցություն տարածաշրջանի զարգացման, զբաղվածության հնարավորությունների (մշտական և ժամանակավոր աշխատատեղերի ստեղծում) և այլնի վրա: Կանխատեսվում է, որ ճանապարհի վերակառուցումից հետո տեղի կունենա դեպի Տաթև զբոսաշրջային



կենտրոն՝ ներքին և միջազգային զբոսաշրջային ժամանումների աճ: Ծրագիրը կունենա նաև անմիջական ազդեցություն հարակից գյուղերի բնակիչների և ճանապարհով երթևեկող այլ անձանց վրա՝ կրկնակի կրճատելով ճանապարհը անցնելու տևողությունը:

Փորձաքննական պահանջներ

1. Հաշվի առնելով, որ ճանապարհի հատվածը /դեպի Տաթև համայնք ավարտվող հատված/ գտնվում է Տաթև վանական համալիրի պահպանական գոտում, պատմական միջավայրի անխաթար պահպանության նպատակով անհրաժեշտ է բացառել որևէ շինության տեղադրումը նշված տարածքում, իսկ նոր կառուցվող դիտակետերի և շվաքարանների տարածքում հնարավոր մշակութային շերտերի բացահայտման դեպքում շինարարական աշխատանքները շարունակել մշակույթի նախարարության համապատասխան մասնագետների ներկայության ապահովման և դրական եզրակացության հիման վրա:
2. Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է ազդակիր համայնքի ղեկավարից ստանալ համապատասխան համաձայնեցումներ՝ շինարարական հրապարակների տեղադրման, շինարարական աղբի և թափոնների հեռացման վայրերի վերաբերյալ (մինչև շինարարական աշխատանքների մեկնարկը):
3. Մինչև աշխատանքների մեկնարկն անհրաժեշտ է համապատասխան լիազորված մարմինների հետ համաձայնեցված մշակել երթևեկության և տրանսպորտի կառավարման պլան, որտեղ կսահմանվեն երթևեկության գոտիները և անվտանգության անհրաժեշտ միջոցառումները (շինարարության սկզբից մինչև ավարտ):
4. Շինարարության ընթացքում անհրաժեշտ է ապահովել ԲԿՊ-ում և բնապահպանական մոնիթորինգի պլանում առաջարկվող միջոցառումների և մոնիթորինգային դիտարկումների իրականացումը և ժամանակացույցերը, որոնց արդյունքները պետք է հասանելի լինեն պետական շահագրգիռ մարմիններին և հանրությանը (շինարարության ժամանակահատվածում):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Տարածքային Չարգացման Հիմնադրամ կողմից ներկայացված <<Դեպի Տաթև վանական համալիր տանող ճանապարհի վերակառուցում>> աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ



Գլխ. մասնագետ

Ա. Դոնոյան

Հ. Մկրտչյան